14674

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«17» 12 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0222-21

Ձեռնարկողը՝ ***«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ***
ք. Երևան Շիրակի 74/16

Գործունեությունը՝ ***Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա. Բաբաջանյան 42/5 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0222-21

<17> 12 2021թ.

Երևանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա. Բաբաջանյան 42/5 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Երեվանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա. Բաբաջանյան 42/5 հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Կառուցապատման համար նախատեսված հողամասի մակերեսը կազմում է 79618,92քմ: Կառուցապատման աշխատանքային նախագծերը մշակվել են Երևանի քաղաքապետարանի կողմից 09.09.2021թ. տրված N01/18-07/1-Դ-1922-846 ճարտարապետահատակագծային առաջադրանքի համաձայն:

Նկարագրական մաս

Քննարկվող հողատարածքը գտնվում է Երևանի Մալաթիա-Սեբաստիա վ/շ, Ա.Բաբաջանյան 42/5 հասցեում, որի մակերեսը կազմում է 79620քմ՝ 01-007-0461-0093 կադաստրային ծածկագրով: Հողատարածքը Ա. Բաբաջանյան փողոցի նկատմամբ զուգահեռ է: Հողատարածքի ճակատային եզրագիծը գլխավոր փողոցից գտնվում է 112 մ հեռավորության վրա և տարանջատված է փողոցից բազմաբնակարան բնակելի (6-8 հարկ) և հասարակական կառուցապատմամբ: Հողատարածքի հյուսիս-արևելյան ճակատի ողջ երկայնքով առկա է ասֆալտապատ 14.5 մ լայնությամբ ճանապարհ, որը ներկայումս ունի մեկ մոտեցում՝ Ա. Բաբաջանյան փողոցից: Երևանի գլխավոր հատակագծով նախատեսված է ևս մեկ մոտեցում Ա. Բաբաջանյան փողոցից, սակայն ներկայումս ճանապարհին ասֆալտապատ չէ և ունի հիմնահողային ծածկույթ: Հնարավորություն կա նախատեսելու ևս երկու ճանապարհ դեպի հողատարածք, որոնցից մեկն ապահովում է հասանելիություն դեպի Ծ. Իսակովի պողոտա (6մ

լայնությամբ), իսկ մյուսը՝ Ա. Բաբաջանյան-Ծ. Իսակովի (7մ լայնությամբ) պողոտա ճանապարհային հանգույց: Կառուցապատումը նախատեսվում է իրականացնել երկու փուլով: Առաջին փուլում նախատեսվում է բնակելի հատվածի կառուցապատումը, որը բաղկացած է 4 բնակելի բլոկներից, որոնցից յուրաքանչյուրի բոլոր շենքերի 1-ին եվ 2-րդ հարկերում կիսով չափ նախատեսվում են հասարակական նշանակության տարածքներ: Երկրորդ փուլում նախատեսվում է բնակելի 4 բլոկների միջնամասում կառուցել հասարակական նշանակության կիսագետնափոր եռահարկ շինություն՝ երկու ստորգետնյա և մեկ վերգետնյա :

Առաջին բլոկը բաղկացած է 6 միավոր բազմահարկ բնակելի շենքերից, որի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել հողատարածքի հյուսիս-արևելյան մասում, այն կազմված մեկ հատ 9+1 տեխնիկական, երկու հատ 13, երկու հատ 17+1 տեխնիկական և մեկ հատ 20+1 տեխնիկական հարկ հարկայնությամբ: Առաջին բլոկի կառուցապատման արդյունքում առաջացող ներքին բակում և հողատարածքի եզրագծին մոտ նախատեսվում է տեղակայել թենիսի 2 կորտ, բասկետբոլի դաշտ, 4 զրուցարան, 3 մանկական խաղահրապարակ, ջրավազան և կանաչապատ տարածքներ: Նախատեսվում է նաև ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիում ներկառուցված պոմպակայան, էլ. ենթակայան և էլ. վահանակային սենյակների կառուցում:

Երկրորդ բլոկը բաղկացած է 6 միավոր բազմահարկ բնակելի շենքերից, որի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել հողատարածքի հյուսիս-արևելյան մասում, այն կազմված մեկ հատ 9+1 տեխնիկական, երկու հատ 13, երկու հատ 17+1 տեխնիկական և մեկ հատ 20+1 տեխնիկական հարկ հարկայնությամբ: Երկրորդ բլոկի կառուցապատման արդյունքում առաջացող ներքին բակում նախատեսվում է տեղակայել թենիսի 1 կորտ, բասկետբոլի դաշտ, 2 զրուցարան, 2 մանկական խաղահրապարակ, ջրավազան և կանաչապատ տարածքներ: Նախատեսվում է նաև ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիում ներկառուցված պոմպակայան, էլ. ենթակայան և էլ. վահանակային սենյակների կառուցում:

Երրորդ բլոկը բաղկացած է 6 միավոր բազմահարկ բնակելի շենքերից, որի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել հողատարածքի հյուսիս-արևելյան մասում, այն կազմված մեկ հատ 9+1 տեխնիկական, երկու հատ 13, երկու հատ 17+1 տեխնիկական և մեկ հատ 20+1 տեխնիկական հարկ հարկայնությամբ: Երրորդ բլոկի կառուցապատման արդյունքում առաջացող ներքին բակում նախատեսվում է տեղակայել 4 զրուցարան, 3 մանկական խաղահրապարակ, ջրավազան և կանաչապատ տարածքներ: Նախատեսվում է նաև ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիում ներկառուցված պոմպակայան, էլ. ենթակայան և էլ. Վահանակային սենյակների կառուցում:

Չորրորդ բլոկը բաղկացած է 6 միավոր բազմահարկ բնակելի շենքերից, որի կառուցապատումը նախատեսվում է իրականացնել հողատարածքի հյուսիս-արևելյան մասում, այն կազմված մեկ հատ 9+1 տեխնիկական, երկու հատ 13, երկու հատ 17+1 տեխնիկական և մեկ հատ 20+1 տեխնիկական հարկ հարկայնությամբ: Չորրորդ բլոկի կառուցապատման արդյունքում առաջացող ներքին բակում և հողատարածքի եզրագծին մոտ նախատեսվում է տեղակայել թենիսի 1 կորտ, վալեյբոլի դաշտ, ֆուտբոլի դաշտ, վազքուղի, 5 զրուցարան, 3 մանկական խաղահրապարակ, ջրավազան և կանաչապատ տարածքներ: Նախատեսվում է նաև ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիում ներկառուցված պոմպակայան, էլ. ենթակայան եվ էլ. Վահանակային սենյակների կառուցում:

Ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին համապատասխան յուրաքանչյուր բլոկի 6 մասնաշենքերը միավորված են համատեղ

ստորգետնյա եռահարկ ավտոկայանատեղիներով: Շենքերի շքամուտքերը առանձնացված են հասարակական նշանակության սենքերից: Բոլոր շենքերն ունեն թեքուղիներով կահավորված մուտքեր: Բնակելի հարկերը տիպարային են: Վերելակները յուրաքանչյուր շքամուտքում երկուսն են՝ 400կգ և 800կգ բեռնատարողությամբ: Աստիճանավանդակի դռները նախատեսված են ինքնափակվող և հակահրդեհային: Միջանցքները սարքավորված են ծխահեռացման համակարգով: Բոլոր բնակարանների շքամուտքերում նախատեսվում են հրդեհի ազդանշման տվիչներ: Բնակարանային օդորակիչների արտաքին բլոկները նախատեսված են պատշգամբներում տեղադրվող: Յուրաքանչյուր բլոկի ստորգետնյա ավտոկայանատեղն ունի մեքենաների երկկողմանի ընթացքով երկու մուտք:

Բնակելի համալիրը ունի հետևյալ տեխնիկատնտեսական ցուցանիշները.

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱԿԵՐԵՍ	79 620 քմ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՄԱԿԵՐԵՍ	26052 քմ
ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ	15596 քմ
ՍԱԼԱՊԱՏՈՒՄ	2298 քմ
ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ	31928 քմ
ԽԱՂԱ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ	3584 քմ
ՋՐԱՅԻՆ ՄԱԿԵՐՄՆԵՐ	160 քմ
ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ՔԱՆԱԿ	996X4 = 3984
Ս/Գ ԱՎՏՈԿԱՅԱՆ ՔԱՆԱԿ	795X4 = 3180
ՇԻՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	2916 օր

Քանի որ այս տարածքը գտնվում է քաղաքի բնակելի թաղամասում, ամբողջ շինարարության ընթացքում միջոցառումներ կիրականացվեն շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Փոշուց զերծ մնալու համար տարածքը մշտական խոնավ կպահվի և կապահովվի ոռոգման ջրով: Նորմայից ավելի վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ չեն կատարվի, շինմեքենաները շինհրապարակ կմտնեն և դուրս կգան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը կխոնավեցվի և կծածկվի պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին կդադարեցվի աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար և ըստ անհրաժեշտության, կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ: Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը իրականացվելու է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում: Շինարարկան աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բետոնի խառնուրդը կմատակարարվի բետոնատար ավտոմեքենաներով, մասնագիտացված ընկերության կողմից: Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառվել են նախնական գնահատման հայտի բնապահպանական միջոցառումների ծրագրում և բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում: Շինաշխատանքների իրականացման ընթացքում առաջացող թափոնների տեսակները, քանակները, շինարարական մեքենաների պահանջարկը հաշվարկվել է շինաշխատանքների իրականացման երկու փուլերի համար:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 հազար դրամ, ամբողջ շինարարաության ընթացքում 2800 հազար դրամ:

Հողային աշխատանքների ծավալները հաշվարկված են շինարարական աշխատանքների իրականացման 2 փուլի համար՝ հանույթ՝ 115500 քմ և հետլիցք՝ 34650 քմ:

Ավելացած հողային զանգվածը համապատասխան թույլտվություն ստանալուց հետո կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից սահմանված վայր:

Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից տրված ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան՝ ջրամիացման, հակահրդեհային հիդրանտի տեղադրման և գոյություն ունեցող կոյուղագծին միացման նախագծային լուծումներին համաձայն: Ջրամատակարարումը կիրականացվի գոյություն ունեցող ջրատարից, կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին: Ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքից մոտ 700մ հեռավորությամբ անցնող d=1200մմ ջրատարից: Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր կկատարի:

Շենքից կեղտաջրերի հեռացումը կկատարվի է բակային ցանց, որտեղից քաղաքային կոյուղու համակարգ: Ջրերի հեռացումը կատարվում է բակային ցանց, որտեղից միացվում է հեղեղատային կոյուղու բակային համակարգին:

Աշխատողների կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Էներգախնայողության նպատակով շենքում նախատեսված են.

- ջերմային կորուստների նվազեցման նպատակով խողովակաշարերի և օդատարների համար կիրառել բարձր արդյունավետության ջերմամեկուսիչներ,
- արտաքին կոնստրուկցիաների ջերմամեկուսացում,
- օդատարների ջերմամեկուսացում ժամանակակից ջերմամեկուսիչ նյութորով,
- օդափոխության համակարգում կիրառել բարձր արդյունավետությամբ ղեկավարվող ջերմափոխանակիչներ:

Համաձայն «Գազպրամ Արմենիա» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի բազմաբնակարան բնակելի համալիրի գազամատակարարումը կիրականացվի ԳԲԿ Երևան-4 սնող Dպ-500 կողմնատար գազատարից:

Բնակելի համալիրում կենտրոնացված կաթսայատուն չի նախատեսվում, բնակարանների ջեռուցումը կիրականացվի լոկալ կաթսաներով:

Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ:

Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կապված են՝ փորման և բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ՝ փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում, ցեմենտի արտանետումներ տարածքում նախատեսվող բետոնահանգույցից, դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատել,

- շինությունների ծածկել համապատասխան բարձրության անթափանց թաղանթով,
- փոշի առաջացնող շինարարական աշխատանքների ընթացքում իրականացն ջրցան,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական
վիճակը և իրականացնել կարգավորում,
- սորուն շինարարական նյութերը տեղափոխումը պետք է իրականցվի փակ ծածկով մեքենաներով,
- իրականացնել շինտեխնիկայի անվադողերի լվացում շինհրապարակից դուրս գալուց առաջ:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.
- շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- հողի բերրի շերտը պահպանելու նպատակով նախատեսվում է առաջնորդվել << կառավարության 08.09.2011թ.-ի թիվ 1396-Ն որոշմամբ հաստատված հողի բերրի շերտի օգտագործման կարգով և 02.12.2017թ.-ի թիվ N1404 որոշմամբ՝ իրականացնելով հետևյալ միջոցառումները.
- հողի բերրի շերտը հանել և պահպանել ծածկված վիճակում՝ բացառելով շինարարական աշխատանքների հետևանքով դրա աղտոտումը,
- հողային աշխատանքների կատարման ընթացքում չօգտագործված հողից հանված բերրի շերտն անմիջապես դարսվում է լայնակույտերով: Լայնակույտերը տեղադրվում են գյուղատնտեսության համար ոչ պիտանի տեղամասերում՝ բացառելով լայնակույտերի ջրածածկումը, աղակալումը, արդյունաբերական թափոններով, քարերով, խճով ու շինարարական աղբով աղտոտումը:
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական
սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և քսայուղերի արտահոսք պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայ:

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի << օրենսդրական նորմերին: Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է.
- մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները և հասարակական շենքերը,
- աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- պարբերաար ստուգել և կարգաերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար
կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- թափոնների բոլոր հիմնական տեսակների համար թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն,
- շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից
- վտանգավոր արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Բնակելի համալիրի կառուցման ընթացքում առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել և կանաչապատել: Կանաչապատումը իրականացվելու է համաձայն բարեկարգման, արդիականացման և կանաչապատման նախագծի, որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն ՀՀ կառավարության 08.02.2018թ. N108-Ն որոշման համաձայն:

Բազմաբնակարան բնակելի բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման, մեղմացման ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդը աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ,
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամ:

Պատճառաբանական մաս

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են քաղաքաշինության, կադաստրի կոմիտեները, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Համալիրի կառուցման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում: Դրանք կարող են մեղմվել կամ բացառվել շինարարական աշխատանքների գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ

- Անհրաժեշտ է շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող տարբեր տեսակի թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված,

- Անհրաժեշտ է պահպանել քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N263-Ն և 31.03.2014թ. N93-Ն հրամաններով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»՝ ՀՀՇՆ 30-01-2014, և բնակելի շենքեր. Մաս 1. «Բազմաբնակարան բնակելի շենքեր»՝ ՀՀՇՆ 31-01-2014, նորմերի պահանջները,
- Շինարարական աշխատանքների ընթացքում պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել պետական լիազոր մարմնին,
- Անհրաժեշտ է կանաչապատման աշխատանքներն իրականացնել ըստ հայտում ամրագրված տվյալների՝ ապահովելով հողամասի առնվազն 40%-ը որպես կանաչապատման տարածք,
- Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի և որպես խնամքի պարտադիր միջոցառում ապահովել կանաչ տարածքների ոռոգումը,
- Անհրաժեշտ է շինարարության ընթացքում պահպանել հնարավոր ազդեցությունների կանխելուն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագրերում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցեր:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից Երեվանի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ա. Բաբաջանյան 42/5 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմաններով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ- ի առաջատար մասնագետ՝ Կ.Հարությունյան